Հանդիսություններ Արցախ աշխարհում

ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լեռնային Ղարաբաղում նշվեց ԼՂՀ հռչակման ինն ներորդ տարեդարձը: Այդ կապակցությամբ սեպտեմբերի 2-ին հանրապետության ողջ տարածքում տեղի են ունեցել հանդիսություններ, որոնց մասնակցել են նաեւ Հայաստանի կառավարական պատվիրակությունը՝ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորությամբ, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության պատվիրակությունը, որի կազմում են պեսանվսանգության առաջին փոխնախարար Օլեգ Գուդիմոն, ԳԽ զանգվածային լրատվամիջոցների կոմիտեի նախագահ Նիկոլայ Չեպկոն եւ արտգործնախարարության խորհրդական Սերգեյ Գուսկան: ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը տոնի առթիվ շնորհավորական ուղերձ է հղել ժողովրդին: Նրանում, մասնավորապես, նշվում է. «Ինը տարի առաջ՝ 1991 թվականի սեպտեմբերի 2-ին, մեր ժողովուրդը կատարեց պատմական ընտրություն՝ Արցախի հողում հռչակելով հայկական մի նոր պետականություն... Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ մենք ճիշտ ընտրություն ենք կատարել: Այդ պայքարում մեր կողքին էին Մայր Հայաստանը եւ Սփյուռքը: Հանուն հայրենյաց հողի, հանուն Արցախի ժողովրդի ազատության մենք կորցրել ենք մեր լավագույն զավակներին, որոնց հիշատակի առջեւ գլուխ ենք խոնարհում այսօր»:

Առավոտյան ժամը 11-ին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, Հայաստանի եւ ԼՂՀ կառավարությունների նախագահները, պաշտոնատար այլ անձինք, հասարակայնության ներկայացուցիչներն ու մայրաքաղաքի հյուրերը այցելել են Ստեփանակերտի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Արցախի ազգային-ազատագրական պայքարի նահատակների հիշատակին: Նույն օրը Շուշի քաղաքի կենտրոնական հրապարակում տեղի է ունեցել Վազգեն Սարգսյանի հուշարձանի բացումը: ԼՂՀ կազմավորման 9-րդ տարեդարձի առթիվ հանդիսավոր միջոցառումները Ստեփանակերտում ավարտվել են Վերածննդի կենտրոնական հրապարակում կայացած տոնական համերգով: Սեպտեմբերի 3-ին ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը եւ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը ստորագրել են երկու հանրապետությունների կառավարությունների համագործակցության համաձայնագիր, որով նախատեսվում է համատեղ ծրագրեր իրագործել տնտեսության տարբեր ճյուղերում եւ սոցիալական ոլորտում: